

№№ 5—6 ՄԱՅԻՍ—ՅՈՒՆԻՍ 1900

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԱՂԲԻՒՐ, №№ 5—6.

Ա. Բաժին

Հեղեղների զոհ (պատկեր)։ ⁂ (ոտանաւոր).—Յովհ. Կոստանեանց։ Երաշտահաւ. — Փոխադր.—Ս. Զոհրաբեանց։ Իմ հին ոսկին (ոտանաւոր).—Զաւադ-բէգ Բալուղեան։ Պատիկների մէջ (կըշարունակուի).—Կ. Կ. Մելիք-Շահնազարեանց։ Մայր եւ աղջիկ (ոտանաւոր).—Արեւշատ։ Արեզակի ուղիղը.—Վարդս Սրշակունի։ Հաւնիձ (պատկեր)։

Տ ե ղ ա գ ր ա կ ա ն

Թէհրան.—Խ. Բաբայեանց։

Մղլա Նասրէդդինի ձին (ոտանաւոր).—Պետ. Մոճուեանց։

Բագու.—Սեւ խաղաք (պատկեր)։

Ջ ա ր ճ ա լ ի ֆ

Հանելուկներ։ Կախարդական խաչ։ Կէտակցութիւն։ Բացատրութիւններ։

Բ. Բաժին.

Մելանխոլիկ տեմպերամենտ.—Փ. Շիլինգարեան։

Սիրելի եւ յարգելի իմ խմբագիր

Ա Ղ Բ Ի Ւ Ր

ԳԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

յաւելուածով դաստիարակների համար

XVIII ՏԱՐԻ №№ 5—6 ՄԱՅԻՍ—ՅՈՒՆԻՍ 1900 Թ.

ԹԻՓԼԻՍ
Տպարան Կ. Մարտիրոսեանցի. || Тип. К. Мартиросіанца.
Орбеліановская ул., д. № 1|2.
1900

Дозволено цензурою. Тифлисъ, 7-го Іюня 1900 г.

Հեղեղների զոհ

***

Ստեփի՛ր լուսա-
վառ աստղերին-
քոյ – նախախնամո-
ղին. ստեփի՛ր քնու-
թեան վահմ ձայնի

Հետ՝ վառ ու ջերմապին-նը-
րանք կըշնչեն հպարտ զօրու-
թիւն, ոգեւիր երազ-ազօթի՛ր,
ազօթի՛ր ուրիշի օգնութեան
կարօտ չըմնաս...

Ծովի. Առաքելեանց

ԵՐԵՔ ՏԵՍԻԼՔ

Իմ հօրեղբօր որդի Միքայէլը սովորեցրեց ինձ թռչուն որսալ։ Պէտք է առնել մի հասարակ վանդակ, հանել նրա դռնակը և կախել մուտքի վերևի կողմից այնպէս, որ նա կախ ընկնի մուտքի վրայ։ Դրա համար մուտքի մօտ պէտք է դնել մի փոքրիկ տրապէզ՝ ամրացնելով մի բարակ պարանի վրայ, իսկ դռնակը մի ուրիշ պարանով կապել մի փոքրիկ փայտից, որ դրւում է տրապէզի վրայ և յենարան է դառնում դռնակին։ Փայտի ծայրին պէտք է կպցնել հացի կտոր։

Երբ վանդակը այդպէս պատրաստում են, դնում են այնպիսի թփերի մէջ, որտեղ սուլում են երաշտահաւեր, դեղձանիկներ և ուրիշ թըռ-

չուններ։ Նրանք տեսնելով այդ, թռչում են տրապէզի վրայ և կտցում են փայտի վրայ գտնւած հացը։ Փայտը վայր է ընկնում տրապէզից, դռնակը փակւում է և թռչունին վանդակի մէջ հրում։

Ես տասն տարեկան էի։ Իւրաքանչիւր ամիս մօրից ստանում էի տասն կոպ., որ իմ ռոճիկն էր։ Երկու ամսւայ ռոճիկս չլծախսեցի, որ քսան կոպ. էր, և գնեցի մի փայտեայ վանդակ ու նոյն օրը պատրաստեցի այնպէս, ինչպէս որ սովորեցրել էր ինձ Միքայէլը։ Միւս առաւօտ՝ թէյից յետոյ՝ ես իսկոյն վազեցի մեր բակը, որտեղ բուսած էին թփեր և որտեղ յաճախ տեսնում էի դեղին կրծքով երաշտահաւեր, ու դրի վանդակը թփերի մէջ։

Աշուն էր։ Ուսումն արդէն սկսել էր, ես ժամը իննին դաստիարակչուհի Էմիլիայի հետ մտայ նրա սենեակը՝ դասս կարդալու համար։ Այս անգամ վատ էի կարդում և կարդացածս էլ չէի հասկանում, որովհետև մտածում էի վանդակի մասին, որտեղ կարելի է, արդէն երաշտահաւ էր մտել։ Վերջապէս ինձ արձակեցին։ Թէպէտ արգելել էին ինձ աշնանը առանց գլխարկի և վերարկուի բակ դուրս գալ, բայց և այնպէս ես դուրս թռայ պատշգամբից և

վազեցի վանդակի մօտ։ Վանդակիս մէջ ընկել էր մի երաշտահաւ և անմտաբար զարնւում էր մէկ այս, մէկ այն պատին։ Ես ուրախացած առայ վանդակը և վազեցի դէպի տուն։

Նախ և առաջ գնացի մառանը, հաստատ գիտենալով, որ սպասաւոր Գրիգորը ինձ կըգովէ։ Եւ իրաւի, նա տեսնելով վանդակի մէջ երաշտահաւը, զարմացաւ և ասաց. «կեցցես, փոռիկ պարոն»։

Յետոյ ես վազեցի քրոջս՝ Կատարինէի մօտ, որ նոյնպէս պիտի ուրախանար իմ թռչուն որսալու արուեստի վրայ։ Կատարինէն նստած էր ծծմօր հետ։ Նա, ճիշտ որ ծափահարելով ասաց. «Ա՛խ, ի՜նչ լաւ եւ դեղուագոյն թռչնիկ է։ Յակոբ, բռնիր ինձ համար էլ մի այդպիսին»։

—Այս երաշտահաւ է, ասացի ես լրջօրէն Կատարինէին, եթէ մի ուրիշն էլ բռնեմ, այն էլ քեզ կըպարգեւեմ։

—Ահ, չնորհակալ եմ, սիրելի Յակոբ, ասաց Կատարինէն, միշտ փալաքշելով, երբ որ նրան ասում էին իրան ախորժելի բան,—ի սէր Աստծոյ բռնիր։

— Թռչո՜ւն է բռնել։ Ախ, խղճուկ, ասաց մեր ծերունի և սիրելի ծծմայրը, տեսնելով երաշտահաւը։

—Ինչով է նա խեղճ, Նանիկ։ Ես նրան կըկերակրեմ։

—Կերակրե՞լ, բայց միթե նրան ախորժելի է վանդակում նստելը։ Թէ որ քեզ նստեցնէին, ով գիտէ ինչ կանէիր։

—Նանիկ, ի՞նձ։ Զէ՞ որ նա թռչուն է, իսկ ես մարդ։

—Ինչ կուզես ասել, թէ դու մարդ ես, իսկ երաշտահաւը թռչուն, ծիծաղելով ասաց ծծմայրը։—Դու էլ, նա էլ Աստծոյ արարածներն էք։ Ազատութիւնը ամենի համար թանգ է։

Ծծմօր այս խօսքերը տխրեցրին ինձ և խանգարեցին իմ բաւականութիւնը։ Բայց և այնպէս վերցրի պահարանից մի սպիտակ բաժակ, լցրի նրա մէջ ջուր և դրի վանդակում. յետոյ առայ սպիտակ հաց, քրդեցի երաշտահաւի առաջ և վանդակը դրի պատուհանի վրայ։

—Ահա նա մեզ մօտ կապրի և կերգէ, ասացի ես հպարտութեամբ։

Հէնց որ ես այդ խօսքն ասացի, երաշտահաւը յանկարծ դուրս եկաւ դռան արանքից և, թռաւ։ Նա մի քանի պտոյտներ անելուց յետոյ նստաւ պատի վրայ։

—Ախ, թռաւ, ասաց ծծմայրը։

—Նայիր, նանիկ, ասում էր Կատարինէն, նրա ձեռքից քաշելով: Իսկ ես կանգնել էի, առանց չունչ առնելու և տեղիցս չարժւելու:

Ի՞նչ պէտք էր անել:

Երաշտահաւը իր չորս կողմը նայելուց յետոյ, տեսաւ պատուհանից ներս թափանցող լոյսը և նետի նման թռաւ դէպի պատուհանը: Մի ինչ որ կոշտ և անախորժ ձայնով տրմբացրեց երաշտահաւը, և ասես ինչպէս քար, ընկաւ պատուհանի մօտ գտնւած սեղանի վրայ: Նա իր սև ոտիկներով չարժումներ էր գործում և դեղին կուրծքը դէպի վեր դարձրած՝ պառկել էր և անդադար կտուցը բաց ու խուփ էր անում:

—Սատկեցաւ, ասաց ծծմայրը.—հիմա ի՞նչ լաւ բան դուրս եկաւ սրանից: Ա՛յ, չարաճճի տղայ:

Ծծմայրը, գլուխը չարժելով, վեր կացաւ, մօտեցաւ սեղանին և առաւ իր չորացած ձեռների մէջ անշնչացած երաշտահաւին, որն ոտներով մի չարժում գործեց և դադարեց:

—Երևի սատկեց, ասաց ծծմայրը:—Առ, տար ձգիր մի փոսի մէջ:

—Ի՞նչպէս թէ սատկեց: Անկարելի բան

էր, նանի, չուտով ջուր բերր, անհանգստութեամբ ասում էր ես։

Ծծմայրը ջուր բերեց և սկսեց ածել թըռչունի գլխին, բայց նա այլ ևս չըշարժւեց։ Շուտով նրա մարմինը սկսեց սառել և ընդարմանալ։

Ես առայ նրան իմ ձեռների մէջ, և ինձ այնքան ամօթալի, անախորժ և սարսափելի էի համարում, որ ուզում էի անչնչացած երաշտահաւի մարմինը վայր ձգել իմ ձեռքից։

—Լաւ տղայքը թռչուններ չեն որսում, ասաց ծծմայրը.—Այդ միմիայն՝ ամենավատերն ու չարաճճիներն են անում։ Ի՞նչու համար ըսպանեցիր թռչունին։

Ես թռչունի մարմինը դուրս տարայ և ախոռի յետևում փոսի մէջ թաղեցի։

«Ի՞նչու համար սպանեցիր թռչունին», չարած կրկնում էի ես ծծմօր խօսքերը, որոնց նա արտասանեց այնպիսի եռանդուն ձայնով։

Այնուհետև երկար ժամանակ խիղճս տանջում էր ինձ և ես անհանգիստ էի։

Փոխագր. Ս. Զոհրաբեանց

ԻՄ ՀԻՆ ՈՍԿԻՆ

—

Թի հին ոսկի ուխիմ պահած
Սրտիս խորունկ ծալքերում,
Օ՛, նա երբէք չի ժանգոտած
Եւ չի երբէք նա մաշում:

Աչքիս լոյսի պէս եմ նայում,
Ջիգե՛ր կորցնեմ ես նրան,—
Օր ու գիշեր արթուն հսկում,
Որ գող մարդիկ չիմանան...

Նա է իմ ողջ հարստութիւն,
Կեանքիս վայելքն ու ափսոսանք,
Էլ միտք չունի իմ գոյութիւն,
Թէ պատահի մի փորձանք:

Մայրս տրւեց ինձ այն ոսկին,
Ինչպէս պարգեւ չնաշխարհիկ,—
Եւ դա սէրն է իմ կաթոգին
Դէպի սնբախտ իմ մայրիկ...

Ո՛չ սուր, հրացան, ո՛չ սպառնալիք
Չեն բաժանիլ նրանից,
Միայն կեանքիս հետը մարդիկ
Կարնեն նրան ինձանից...

Չաւադ-բէկ Բալուեանց

ԷՄԻԼ ՏԷՖՕ

ԾԱՂԻԿՆԵՐԻ ՄԷՋ

Ֆերուկ այգեպանի պատմութիւնները

(Ըրաններէնից փոխադրած եւ յարմարեցրած հայ մանուկների համար)

I

ԳԱԼՈՒՍՏ

Գարնան ամիսն էր. արեւը իր մեղմ ու կենդանարար լոյսը սրփուել էր Կովկասեան սարերի ու Հովիտների վրայ։ Թիֆլիսի շրջակայքում, խաղողի վազերով շրջապատուած մի դեղեցիկ սարուհարթում աչքի էր ընկնում մի շքեղ տուն, որ նոր էր դնուած եւ տէրը պիտի դար Հեռի Պետերբուրգից իր նոր կալուածքը։

Տունը շինուած էր այգու մէջ եւ նրա ետեւը ձգուում էին խաղողի անվերջ այգիները։

Այգու մի ծայրում կանանչներում թաղուած երեւում էր գլխաւոր այգեպանի սպիտակ խրճիթը, որ այնպէս սիրուն տեսք ունէր խիտ տանձենիների ու թթենիների արանքներից. նրա մաքուր լուացած պատուհանները այնպէս պայծառ փայլփլում էին արեգակի դիմաց, որ կարծես այդ տունը ոչ տըրտմութիւն էր տեսել եւ ոչ էլ հոգսերի տակ ճնշուել, բայց իրօք այդպէս չէր. նրա ներսը տիսուր ու լուռ էր։ Ֆերուն այգեպանը հիւանդ պառկած էր եւ շատ տիսուր մտածութիւնների մէջ ընկած։

Նա մտածում էր. նոր տէրերը կըգան, ուր պիտի գնամ Արշակի հետ. ով կըպահէ ոտները փշրուած, ուժից ընկած մի մարդու և այն էլ վեց տարեկան երեխայի հետ: Եւ ինչպէս պիտի բաժանուեմ այս այգուց, որի ամեն մի թուփը, ամեն մի ծառը իմ տնկածն է, իմ աչքի լոյսն է: Ա՛խ, Տէր Աստուած, ինչ կըլինի իմ ճարը... Հառաչեց ծերունին և դարձաւ թոռանը, որ անկողնի դիմաց թախտի վրայ նստած էր:

«Արշակ, գնա՛ իմացար, տես նրանք եկել են:

Արշակը վաղուց ձանձրացել էր հանգիստ նստելուց, նա ուրախութեամբ դուրս թռաւ և վազեց ծառաստանից դէպի աղանների տունը:

Բակում մարդիկ իրար էին անցել, կառքերից հանում բերում էին սնդուկներ, զամբիւղներ: Արշակը մեծ կաղնու ետևում թաց կացած՝ հետաքրքրութեամբ տեսաւ այս ամենը և մտածեց. «Երևի նոր տէրերը եկել են»:

Նա ինքն էլ պատրաստ էր բանուորներին խառնելու, նրանց օգնելու, բայց ինչքան որ բնութեամբ ժիր էր, այնքան էլ վախկոտ էր. նա դուրս չեկաւ իր թաց կացած տեղից, որպէս ղի անծանօթ մարդիկ իրան չըտեսնեն:

Նա երկար կանդնեց ծառի ետևում և միայն այն ժամանակ մտաբերեց պապի յանձնարարութիւնը, երբ վերջին կապոցն էլ տուն տարան:

«Տեսնես մեր տեղը ում կըտան, մտածում էր Արշակը տուն դառնալուց և աչքերը արտասուքով լցեցին, երբ յիշեց որ պիտի թողնէ այդին, ծառուղու ծայրում գտնւած մաքուր տնակը, ուր ինքը ծնել միացել էր, ուր վախճանուել էին իր ծնողները և ուր ինքը այնպէս հանգիստ ապրել էր իր պապի հետ:

«Ա՛խ ինչու մեծ չեմ, որ կարողանայի պապիս պաշտօնը կատարել, նա կըհանգստանար ծերութեան ժամանակ և այստեղից էլ չէր հեռանալ»: Այսպէս ինքն իրան խօսելով Արշակը տուն եկաւ, տխուր նայելով իրանց բնակարանի շուրջը քսած վարդի թփերին:

II

Ն Ո Ր Տ Է Ր Ը Ր Ն

Պետերբուրգից եկած նոր տէրերը, Արամեանցի ընտանիքը շատ էր մեծ չէր. հայրն էր, մայրը և իրանց երկու զաւակը — մեծը՝ Հայկանուշը և փոքրը իննամեայ Աննիկը:

Հայկանուշը Հիւանդոտ էր, նա անկողնից շատ քիչ էր դուրս գալիս և կեանքի մեծ մասը անցրել էր փակ սենեակներում. երբ 16 տարեկան եղաւ, բժիշկները խորհուրդ տւին ծնողներին, որ գնան Կովկաս, որի մեղմ ու տաք կլիմայն բոլոր տեղերից աւելի կարող էր Հիւանդին օգնել:

Արամեանցը Կովկասում իրան դիրքով յայտնի այդ կալւածքը գնեց և առանց ուշացնելու այդտեղ փոխադրւեց:

Նրանց հետ եկաւ և նրանց Հօրեղբայր Յարութիւնը, որ մի ուսեալ ծերունի էր և շատ էր սիրում իր եղբօրորդիներին: Մինչև որ տունը-տեղը կարգի կրձդէին, Աննիկը Հօրեղբօր հետ գնաց այգին շրջելու:

Հարաւային Հարուստ բուսականութիւնը Աննիկին աննկարագրելի զարմանք պատճառեց. նա րոպէ առ րոպէ բացականչում էր՝ «ա՛խ Հօրեղբայրս, մի այստեղ նայեցէ՛ք Է, կամ ա՛խ մի Հոտ առէ՛ք» ու կանգնած հիացած նայում էր ուղղաձիգ Հսկայ բարդիներին, ճնճղնւած նոճիներին ու թթենիներին, կամ կռանում մանուշակի թաղերի վրայ կամ թէ չէ թռչի վարդի կոկոններով հրճւում:

Յարութիւնն էլ եղբօր որդուց պակաս չէր զմայլւում շըրջապատող բնութեամբ և միևնոյն ժամանակ նա զարմանում էր այգու կանոնաւոր պահպանութեան վրայ:

— Աննիկ, ինչքան լաւ կըլինէր, եթէ հին այգեպանը մեզ մօտ մնար, ասաց Հօրեղբայրը. ես լսել եմ որ նա քառասուն տարի է, ինչ որ հին կալւածատիրոջ մօտն է և այս այգու բոլոր ծաղիկներն ու ծառերը ինքն է տնկել ու մեծացրել:

«Ինչի չըպիտի մնայ, նկատեց Աննիկը և հրճւեց հազուագիւտ բոյսերի վրայ։

— Ո՞վ գիտէ. պատասխանեց Հօրեղբայրը, կարելի է նա չի ցանկանում նոր տէրերի մօտ մնալ, մինչև անդամ նա մեզ չըհանդիպեց, երբ եկանք։

Աննիկը շատ էլ չըհետաքրքրւեց նրանով, թէ այդպիսին կըմնայ, թէ կըհեռանայ. նա լեռնային օդը ծծում էր, նայում կապուտակ հորիզոնի տակ բարձրացող լեռներին, ուրախանում էր ծաղիկների ու կանաչների վրայ և երջանիկ էր, ինչպէս այն փոքրիկ թռչնիկը, որ հացի ծառի ճղան վրայ նստած ուրախ ճլվլում էր։

Այդու մի ճանապարհից միւսը անցնելով՝ նրանք աննկատելի կերպով հասան այդպիսի տնակին։ Երշակի դէմքը երևաց պատուհանում և իսկոյն ծածկւեցաւ։

— Երևի այստեղ է ապրում ծերունի այդպիսին, ասաց Յարութիւնը, մտնենք, Աննիկ, իմանանք։

III

Հ Ի Ւ Ա Ն Դ Ը

Նոր տէրերը մտնելուց Երշակը ներս պրծաւ սպսպի մահճակալի տակը ու կպաւ պատին։ Իսկ ծերունին ինչքան ուժը պատեց, գլուխը բարձրացրեց բարձի վրայից և տխրութեամբ ասաց. «ներեցէք, որ ես այս դրութեամբ եմ ձեզ ընդունում. մի քանի օր սրանից առաջ ինձ դժբախտութիւն պատահեց— ինձորենու ճիւղերը կտրելիս՝ ոտս սահեց և ես սանդուխքից ընկայ ու կոտրեցի ոտս ու ձեռս։ Բժիշկն ասում է մի քանի ժամանակից յետոյ ես վեր կըկենամ... բայց առանց փայտերի օգնութեան չեմ կարող մանդալ, աւելացրեց նա տխրութեամբ։

Յովհաննէսը ծերունու մօտ նստեց և խօսքի բռնւեց, սակ Աննիկը տնտղեց փոքրիկ մաքուր սենեակը և այս ու այն

կողմը նայելուց յանկարծ աչքը ընկաւ մահճակալի տակ և քիչ մնաց որ ծիծաղից թուլանար, երբ այնտեղից յանկարծ Երշակը հանեց գլուխը. Աննիկը ձեռքով արաւ, որ դուրս գայ, բայց Երշակը գլխով շարժումներ անելով հասկացրեց որ երբէք այնտեղից դուրս եկողը չէ և կրկին շտապով թագնուեցաւ։ Աննիկը ուզում էր մի անգամ ևս դուրս կանչել, բայց այդ ժամանակ մօրեղբայրը վերկացաւ և մնաս բարև ասելով ծերունի այգեպանին, որի անունը Յովակիմ էր, խնդրեց որ անհանգիստ չըլինի և միայն աշխատէ շուտով առողջանալու։

Ճաշի վրայ Յարութիւնը եղբօրը և հարսին ասաց. «այո, վատ է դրութիւնը. ծերունին այժմ անկարող է բանելու, թերևս կարենայ փոքր այգու նայել, խեղճը չըգիտէ ինչ անէ... ուզում է հայրենիք վերադառնալ. բայց ինչ աշխատանք կարող է անել, ինքը հիւանդ և երեխայ թոռը վզին, բացի այդ նա այնքան հպարտ է, որ երբ փող առաջարկեցի, չընդունեց։ «Չնորհակալ եմ, ասում է, որ դեռ թոյլ էք տալիս մինչև առողջանալս այստեղ պառկեմ»։

—Յաւալի է. պատասխանեց Արամեանը, ես այդպիսի մարդ գժւար թէ շուտով կարենամ գտնել. ինձ ասել են որ նա գիտնական այգեպան է, արտասահմանում է վերջացրել այգեպանութեան դասընթացը և շատ լաւ է հասկանում իր գործը։

—Վաղը ես ինքս անձամբ կըգնամ նրա մօտ, դուցէ նա ինձ զիջանի, չէ որ այստեղը թողնելը նրա համար շատ ցաւալի պիտի լինի,— ասաց Աննիկի մայր Նունէն։

Միւս օրը Աննիկը ամենքից վաղ զարթնեց, սուս ու փուս հագնուեց և դուրս եկաւ պատշգամբը։ Օդը լցած էր մանուշակի ու յասմիկի հոտով։ Արեգակի առաջին ճառագայթները ուրախ խաղում էին այգու խոնաւ կանաչի և նրա միջից հոսող երես՝ բայց արագընթաց գետակի մակերևոյթի վրայ։

Յողի ծանր կաթիլները պսպղալով և փշրտւելով ծածկում էին խոտը և ծաղիկները սկաւառակների միջից ցոլցո-

լում. թռչուննները հազար ու մի ձայնով ճռւողում էին, ծաղկի թաղերի վրայ թռչռում էին երկու մոխրագոյն թիթեռներ և կապուտ երկնքում, շատ բարձրում սևին էին տալիս մէն ու մենակ թռչող արծիւները:

Աննիկը ագահութեամբ ծծում էր առաւօտեան մաքուր օդը:

—Ա՜հ, դու արդէն զարթնել ես, լսեց նրա ետևից Նունէի ձայնը: Աննիկը շուռ եկաւ և վազեց մօր մօտ և համբուրելով ասաց «ախ մայրիկ, ինչպէս լաւ է այստեղ, բոլորովին նման չէ մեր Պետերբուրգի ամարանոցին»:

«Այնտեղ, աղջիկս, հիւսիս է. իսկ այստեղ հարաւ, մեզանում մայիսին է բացւում վարդը, իսկ այնտեղ կարծեմ դեռ ձիւները բոլորովին չեն հալւել», պատասխանեց մայրը:

—Մայրիկ, ինչու գլխարկով ու վերարկուով ես, այսպէս վաղ ուր ես գնում, հարցրեց Աննիկը, նոր նկատելով մօր հագուստը:

«Ես ուզում էի այգեպանին տեսնել, այնտեղից էլ գնալ կայարան մեր յանձնած կապոցների համար հարցնելու. թէ չէ յետոյ ժամանակ չեմ ունենալ, երբ ամենքը կզարթնեն:

—Ինձ էլ հետդ տար, մայրիկ, ես այս րոպէին պատրաստ կըլինիմ, և առանց մօրը պատասխանին սպասելու, Աննիկը գլխապատառ տուն վազեց. ճանապարհին քիչ էր մնացել պատառ չոռոմսիմ դայեակին գլորէր, մի բաժակ կաթ խմեց, շտապով վերարկուն ու գլխարկը հագաւ ու կոճակները ճանապարհին կապելով՝ հասաւ մօրը այգեպանի տնակի մօտ:

Ըընայելով որ շատ վաղ էր, Արշակը վաղուց վեր էր կացել և նստած պատշգամբում ախորժակով ուտում էր ձեւին բռնած մի մեծ սպիտակ հացի կտոր, վրան էլ կարագ քսած:

Սենեակում ներս ու դուրս էր անում կովապահ Մարթան, որ Յովակիմին այդ դժբախտութիւնը պատահելուց յետոյ, նայում էր թէ հիւանդին և թէ տանը:

Յովակիմը շատ զգացւեցաւ տիկին Նունէի բարութեան

և դարձրած ուշադրութեան վրայ, բայց չընայելով նրա թախանձանքին, բոլորովին մերժեց իբրև դիտուհի նրանց մօտ մնալ:

— Ես այժմ ինչպէս անդամալոյծ այլևս չեմ կարող այդուն նայել, ինչպէս կարելի է, տիկին, որ ես ձրի ձեր հացն ուտեմ:

«Դուք ոչ ոքի չէք խանգարում, ապրեցէք առաջւայ պէս տնակում և մենք շատ ուրախ կըլինինք:

— Ո՛հ, այդ մի ասէք, տիկին, պատասխանեց Յովակիմը, ես սովոր չեմ ուրիշի հացը ձրի ուտելու. ես մինչև կեանքիս վերջը պիտի յիշեմ թէ ինչպէս դուք բարի էիք ու քաղցր դէպի ինձ որ մի օտար ծերունի եմ. բայց Հաւատացէք, չեմ կարող ձեր առաջարկութիւնը ընդունել:

«Համաձայնիր, Յովակիմ, խնդրում եմ համաձայնիր մեզ մօտ մնալ. ես ամեն օր քեզ մօտ կրգամ խօսելու», ցած ձայնով ասաց Աննիկը:

— Բարի օրիորդ, եթէ իմանամ որևէ բանով կարող եմ վարձահատոյց լինել, այն ժամանակ ուրախութեամբ կըմնայի», արտասւալից պատասխանեց Յովակիմը:

Տիկին Նունէն փորձեց կրկին ծերունուն համոզելու, բայց տեսնելով որ խնդիրքը անօգուտ է անցնում, մնաս բարև ասաց ու հեռացաւ:

Կ. Կ. Մելիք-Շահնազարեանց.

(Կըcարուցակուի)



ՄԸՅՐ ԵՒ ԱՂՋԻԿ

— Մինչև ԵՐԲ այդպէս
Աբցունք պիտ թափես,
Մայրիկ թանկագին.
Ի՞նչու միշտ տխուր
Լալիս ես դու լուռ,
Տանջում քու հոգին.
Ի՞նչու ես տրտում,
Ի՞նչ կայ քո սրտում
Չես ասում մէկին...
— Ա՜խ, սիրուն բալաս,
Մխիթ պիտ գիտնաս
Իմ վիշտ ու ցաւեր:
Մխիթ դու կ'ուզես
Վշտացնել և քեզ,
Սիրտդ անել աւեր:
Չէ, ինձ հետ, բալաս,
Դու չըպէտք է լաս,
Գիտնաս իմ ցաւեր...
— Բայց մխիթ ընդ միշտ
Պիտ թագցնես քո վիշտ,
Մայրիկ, իմ անգին.
Քո ցաւն ասա՛ ինձ,

Յայտնիր քո կսկիծ,
Պատմիր Լուսիկին—
Քո միակ դստեր,
Քո սրտի վշտեր...
Բայց ինձ քո հոգին...

—Թող խօսքերն այրպէս,
Վշտանում եմ ես,
Սիրելի մայր իմ,
Մի ծածկիր ինձնից
Քո ցաւ, քո կսկիծ.
Գիտցիր որ կամիմ
Յաւիդ վշտալից,
Լինել կարեկից...
Պէհ, ասա, մայր իմ...

—Ա՛խ, անգին որդիս,
Յաւերը սրտիս
Շեն ուրախ երգեր.

Եւ միթէ կուզես
Դու մորմոքել քեզ—
Երբ սրտիս վէրքեր
Բացեմ քո առաջ...
Լսես ա՛խս... թառաչ,
Տեսնես խոր ցաւեր:

—Ա՛խ, որդեակ սիրուն
Կասեմ քո սիրուն.
Որ,—ինչպէս չըլամ,
Արցունք թափեմ ես,
Թեքել են երես
Ինձնից բարեկամ,
Ազգական ամեն,
Այլ ևս ուզում չեն
Վրաս նայել անգամ. .

—Բայց երկնի Աստուած...
Նա մեզ չէ թողա՛ծ...

Արեւուտ

ԱՐԵԳԱԿԻ ՈՐԴԻՔԸ

Ըռաջին արկած Գլամինգոյի եւ Դագմարայի

—

ոյսի և տաքութեան յաւիտենական թագաւորութեան մէջ ապրում էին արեգակի երկու չքնաղագեմ որդիքը՝ Երքայորդին և Երքայադուստրը: Նրանց կապոյտ, հրապուրիչ աչքերը փայլում էին ամենքի համար անխտիր, նրանց գեղեցկատեսիլ գանգուր մազերը տարածւում էին ոսկեթել ալիքներով, իսկ այտերի և շրթունքների վրայ խաղում էր արշալոյսի մշտական պայծառ կարմրութիւնը: Երքայորդու անունն էր Փրլամինգո, իսկ Դագմարան էր արքայադուստրը:

Խօսք չեմ գտնում նկարագրելու այն ճոխ փայլը, որով զարդարւած էր նրանց բիւրեղեայ ապարանքը: Առաստաղները —մաքուր ոսկուց, յատակը—գոյնզգոյն մարջաններից, իսկ լուսամուտներում փայլում էին բոցավառ մեղեսիկ և կարկեհան քարերը: Նրանց շրջագայութեան համար պատրաստ էին Ար-

Հաւ Ցնծի ժամացոյց

կու ամեհի նժոյգներ։ Փլամինգոյի նժոյգն էր արագավազ Քամին, իսկ Դագմարայինը— Ճառագայթը։ Սրանք ոչ յոգնածութիւն և ոչ էլ արգելք գիտէին. բոպէապէս սլանում էին տիեզերքի անծայր տարածութիւնը, թողնելով իրանց ետևից մշտնջենապէս շարժուղ բիւրաւոր աստղերը։

Մի անգամ, զբօսնելիս Փլամինգոն նկատեց գիշերային թագաւորութեան մէջ մի փոքրիկ աստղ։ Երեխաներին այս այնքան զրաւեց, որ նրանք առանց երկար մտածելու ուղևորուեցին դէպի նա։ Այս մեր երկիրն էր։ Ցած իջնելով, արեգակի որդիքը ընկան տաք Հասարակածի վրայ։ Թարթառ և մրրիկ քամիները սաւառնում էին օդում, ոչնչացնելով այն բոլորը ինչ պատահում էր ճանապարհին։ Մարդիկ և գազանները ուժասպառ ծարաւից մի տեղ էին որոնում, ուր կարելի լինէր ապաստան գտնել խեղդող տօթից. շնագայլների ողբաձայն ոռնոցը, առիւծների և վագրների մռնչոցը նմանւում էր մի սարսափելի և յարատև հեկեկանքի, կարծես հնձում էր ամբողջ բնութիւնը, անիծելով հողևարքի տանջանքներում արեգակի շիկացած ոսկեայ ճառագայթները։

— Վա՜յ մոլորակ, բացականչեց յուզած ձայնով Փլամինգոն, այստեղ ատելութեան և անէծքի թագաւորութիւն է։

Ահաբեկ երեխաները թռան նժոյգների վրայ և արագապէս չքացան երկնային կապուտակ եթերքում։

Շատ ու շատ հեռացան և վախենում էին նորից ցած իջնել, բայց յանկարծ Հիւսիսի վայրենի բնութեան պատկերից յաղթահարուած կանգ առան։ Բոլորովին հակառակն էր այստեղ. այն չէր, ինչ տեսան նրանք Հասարակածի վրայ. այժմ նրանց առաջ ձգւում էր վհուկթեամբ Հիւսիսի սքանչելի բնութիւնը—բարձրաբերձ ձնակոյտը, Հիւսիսափայլը և ձմերային երկար գիշերները... Հէքեաթներում յիշած կախարդած արքայադստեր նման ննջում էր երկիրը կէս տարուց աւելի ծածկուած սպիտակ սաւանով. միայն կանաչ եղևինները նոյնպէս և խրճիթներում ծխացող աղօտ լոյսը փոքր ինչ կենդանութիւն

էին տալիս մեռած երկրին: Լոյսը համբուրում էր այստեղ կենդանութեան աղբիւր և ամեն անգամ դիմաւորում էին արեգակին աղօթքներով և օրհնութեամբ:

Ի՜նչպէս լաւ է այստեղ, որքան ազատ կարելի է շնչել, ոգևորուած նկատեց Պագմարան այս խօսքերից յետոյ մի ակնթարթում, կարծես կախարդական զօրութեամբ, չքացաւ գիշերային մթութիւնը և երեխայական քաղցր ժպիտով ծաղկեց, զարդարուեց բնութիւնը: Եկաւ տաք գարունը, սրա հետ միասին կենդանութիւն ստացան ամենքը լի ու լի ուրախութիւններով:

Մոռացան մարդիկ երկարատև հողմաբեր ձմեռան պատճառած վշտերը: Երկար մնացին այնտեղ արեգակի որդիքը. խաղում էին երեխաների հետ, լողում ջրերում, զարդարում մարգագետինները զեղեցկատեսել ճոխ ծաղիկներով, դաշտերը-ոսկեփայլ պարարտ հասկերով: Այսպէս, բոլորովին աննկատելի կերպով, սահեցան անցան ամիսները, անցաւ և հիւսիսային կարճատև ամառը. հասաւ անջատման ժամը. տխրութեամբ բաժանուեցին արեգակի որդիքը նորից քնի պատրաստուող երկրի հետ. նրանց հեռանալով կրկին վրահասան ձմեռան երկար գիշերները: Այդ ժամանակուանից սկսած, իւրաքանչիւր գարնանը արեգակի որդիքը թռչում էին դէպի երկիրը, բերելով իրանց հետ լոյս և ջերմութիւն:

Մի անգամ (երևի Աստած այդպէս էր կամեցել) գարնանը հիւանդացաւ Պագմարան և մնաց իր բիւրեղեայ ապարանքում, իսկ Ֆլամինգոն գնաց միայնակ *). սրա հետևանքն այն եղաւ, որ թէև պայծառ լուսաւոր ամառ էր, բայց միևնոյն ժամանակ ձմեռան նման ցուրտ, չքնար այն տաքութիւնը, որ բերում ափռում էր ամեն տեղ Պագմարան և որի զօրութեամբ արագապէս աճում և հասունանում են բոյսերը: Դաշտերը չքնարողա-

*) Անպտղաբեր տարի էր 1867 թ. Ֆինլանդիայում, գարնան անսովոր ցրտերի պատճառով.

ցան տալ նախկին տարինների առատ հունձը, իսկ մարդիկ ցաւով յիշում էին այն երջանիկ օրերը, երբ արեգակի որդիքը միասին էին գալիս իրանց այցելութեան:

Շատ անգամ նրանք չերմեռանդ աղօթքներով դիմում էին Հայր Աստծուն և խնդրում, որ չըզրկէ իրանց չքնաղագեմ տոկեգանդուր արեգակի որդիների երկնատուր բարիքներից:

ԱՐԵԳԱԿԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Երկրորդ արկած Ֆլամինգոյի եւ Դագմարայի

—

Յիշում ես դու Արքայորդի Ֆլամինգոյին և Արքայադուստր Դագմարային! արեգակի չքնաղագեմ, ոսկեգանդուր որդոցը, որոնք նստած իրանց արագավազ ձառագայթ և փամի նժոյգների վրայ շրջագայում էին օդեղէն տարածութեան միջով.

—Ի՞նչպէս չէ, լաւ յիշում եմ:

Այդ մի առասպել էր լոյսի և տաքութեան մասին. կայ մի ուրիշ առասպել ևս խաւարի մասին, բայց նա տխուր պատմութիւն է:

Այժմ ես կըպատմեմ քեզ Համար օրերի հաւասարութեան մասին:

Պատմիր, պատմիր, ես այդ գիտեմ. այդ լինում է մարտ ամսին:

Հեռու հիւսիսում ապրում էր հսկայ Ֆիմբուլը: Այս հրսկան սարսափելի ուժեղ էր. նա ընակւում էր սառցապատ սարերի կիրճերում, Նորդկապ հրեանդանի միւս կողմը:

Շատ մեծ գիտնական էր հսկայ Ֆիմբուլը. նա կարող էր ստեղծել խաւար, սառնամանիք, կարկուտ և փոթորիկ:

Շատ անգամ Ֆիմբուլը տխրում էր միայնակ նստել կիր-

ճում և լսել թէ ինչպէս սառցէ սարերը դղրդիւնով և ճայթունով զարկւում են միմեանց. տեսնել նա չէր կարող, որովհետև կոյր էր. նրա շուրջը տիրում էր խաւարը, ինչպէս պարկում. նա ունէր մի նժոյգ Բորէաս անունով, որ նշանակում է Հիւսիսային քամի: Հսկայ Ֆիմբուլը գիշերից աւելի սև և մթնադէմ էր, իսկ նրա ձին—սպիտակ որպէս ձիւն: Ձիու փռնչալիս ծածկւում էր նրա շուրջը ամպանման թանձր մառախուղով: Երբեմն Ֆիմբուլը նստած Բորէասի վրայ սաւառնում էր սարերի և անտառների վրայով, այն ժամանակ նմանւում էր նա ձիւնաբեր մեծ ամպերին:

Մի անգամ անցնելով Լապլանդիայի մի սառած լճի վրայով, զգաց նա ծակծկոց իր աչքերում. փչում էր միևնոյն ժամանակ տաք քամի, որից նրա մօրուսը սկսեց հալչիլ. շատ անհաճոյ թւաց նրան այս դէպքը. (հսկաները առ հասարակ մեծ խնամքով են պահում իրանց մօրուսը, կարծելով որ այդ մի առանձին գեղեցկութիւն կըտայ դէմքին):

—Այս ինչ ծակծկոց է իմ աչքերում և որտեղից է փչում տաք քամի ուղիղ իմ մօրուսին, հարցրեց հսկան Բորէասին:

Բորէասը, միւս կախարդական կենդանիների նման կարողանում էր խօսել, բացի դրանից նա շատ երկար ճանապարհորդել էր և շատ բաներ էր տեսել:

—Արեգակի որդիքն են՝ Արքայորդի Փլամինգոն և Արքայադուստր Պագմարան, որոնք շրջում են աշխարհի մէկ ծայրից մինչև միւսը, պատասխանեց Բորէասը:

—Ի՞նչ յանդգնութիւն և ինչ լրբութիւն, բղաւեց հսկան զայրացած, հարցրու շուտով թէ ինչ իրաւունքով են համարձակւում նրանք ճանապարհորդել իմ թագաւորութեան միջով:

Ամբողջ աշխարհը նրանց թագաւորութիւնն է, պատասխանեց Բորէասը, բացի դրանից այնպէս արագ են վազում, որ ես երբէք չեմ կարող հասնել նրանց:

Ոչինչ չունիմ ասելու, շատ լաւ. իրաւի լաւ ոստիկանու-

թիւն ունինք, որ թոյլ է տալիս այդպիսի դատարկաշրջիկնե-րին թափառել տիեզերքի վրայով, վնթ-վնթուց Հսկան: Կանդ-նիր փոքր ինչ, ես կրձգեմ նրանց վրայ իմ մեծ վերարկուն:

Ֆլամինգոն և Պագմարան փոքրիկ երեխաների նման հե-տաքրքրուեցին երբ տեսան, որ իրանց Հանդէպ շարժւում է մի սև ամպ. նրանք կանգնեցրին նժոյգները մօտից տեսնելու այդ հրաշալիքը. Հէնց այս ժամանակ Հսկայ Փիմբուլը ծածկեց իր վերարկուով՝ սև ամպով Ֆլամինգոյին և Պագմարայիս ու յետոյ տարաւ իր գերիներին խաւար սառցէ կիրճը, Նորդկապ Հրան-դանի միւս կողմը:

Մենք արդէն գիտենք, թէ ինչպէս արեգի որդիքը ազա-տօրէն թռչում էին ամբողջ տիեզերքի վրայով, ուրեմն և կա-րող ենք Հեշտութեամբ երևակայել թէ որքան Հաճոյ կըլինէր նրանց Համար բանտարկուիլ այժմ մութ սառցէ կիրճում: Բար-կութիւնից կայծեր էր արձակում Ֆլամինգոն, իսկ փոքրիկ Պագմարան լալիս էր տխրագին թափելով աչքերից առատ արցունքներ. նրա արտասուքներից վերջապէս սկսեց Հալչել սառոյցը. Հսկայ Փիմբուլը ծիծաղում էր շոյելով իր երկար մօ-րուսը և այս նշան էր նրա չափազանց ուրախ տրամադրու-թեան: Բայց բոլորովին անսպասելի կերպով պատահեց այն, որ երբէք Հսկայ Փիմբուլը չէր կարող նախատեսել: Ֆլամին-գոյի արձակած կայծերից խորտակուեցին կիրճի սառցէ պա-տերը, իսկ Պագմարայի զօրեղ արցունքը սառցէ սարը փոխար-կեց լճի: Արեգակի որդիքը ազատելով բանտից, թռան ճառա-գայթ և Քամի նժոյգների վրայ և սլացան դէպի լոյսի թա-գաւորութիւնը:

Լսելով այս Փիմբուլը այնպէս սաստիկ կատաղեց, որ յուզ-մունքից զրկուեց իր մօրուսի կէսից:

Հէնց այդ ժամանակից երեխաների պատճառով ծագեց մի սարսափելի պատերազմ լուսոյ և ջերմութեան թագաւոր արեգակի և ձմռան թագաւոր Հսկայ Փիմբուլի մէջ:

Նրանք կռւում էին երկրագնդի վրայ և այս պատճառով երկիրը սարսափելի կերպով աւերւում էր երկու կողմից ևս. երբեմն ամառնային շոգը, երբեմն ձմռան սաստիկ ցրտերը նեղում էին երկրի բնակիչներին։ Ինուէթեան բոլոր ոյժերը կարծես մասնակից էին ընդհանուր շփոթ-իրարանցման. ահռելի սարերը ճարճատելով տրաքւում էին, իսկ ահեղ ովկեանոսները այնքան սաստիկ էր փոթորիկը, որ ջուրը դուրս էր թափւում ափերից։

Բայց Ֆլամինգոն և Պագմարան սիրում էին երկրի որդոցը, որոնց հետ նրանք յաճախ խաղում էին. նրանք ցաւում էին, որ երկրագնդի բնակիչները մեծ զրկանք են կրում այս պատերազմի պատճառով. խնդրեցին իրանց հայր Թագաւոր արեգակից կասել Հաշտութեան պայման Ֆիմբուլ Թագաւորի հետ։ Թէև իսկական իսկ ուժ չէկայացաւ երկուսի մէջ, բայց և այնպէս լոյսի Թագաւորը և Հսկայ Ֆիմբուլը պայմանաւորեցին տարին երկու անգամ զինադադար անել երեք օր աշնանը և երեք օր գարնանը։ Տարաւ միւս եղանակներին թէև նրանք շարունակում են պատերազմել, բայց առաջւայ նման այլ ևս այնպիսի աւերմունքներ չեն պատճառում, որ երկրագնդի բնակիչները չկարողանան ապրել։

Մարտ ամսում լինում է գիշերահաւասար գարնանային, այս առաջին Հաշտութեան ժամանակն է, իսկ սեպտեմբերին գիշերահաւասար աշնանային-երկրորդը։ Այս ժամանակ ոչ ձրմեռ է, ոչ ամառ, ոչ գարուն և ոչ աշուն. գիշեր և ցերեկ հաւասար երկար, ոչ ցուրտ և ոչ տաք, բայց մարտ ամսին Ֆլամինգոն և Պագմարան թամբում են իրանց նժոյգները, որպէս զի գնան երկրի որդոց այցելութեան և նրանց հետ խաղալու, իսկ սեպտեմբերին ջրում են նժոյգներին յորդահոս վարար անձրևներով ոյժ և քաջութիւն տալու, որ կարողանան վերադառնալ բիւրեղեայ ապարանքը։ Այս ժամանակ մռնչում է Ֆիմբուլը կատաղութիւնից, որովհետև նա երբէք չի սիրում խաղաղութիւն և նրա մռնչոցը յաճախ լսւում է աշնանային

փոթորիկների ժամանակ։ Բայց Ֆլամինգոն և Պազմարան ուղարկում են երկրին հրաժեշտի օդային համբույրներ և ժպտադէմ գլուխները շարժելով յոյս տալիս մարդկանց. «Մենք կըրկին կըվերադառնանք, կրկին կըգանք ձեզ մօտ»։— Այո, վերադարձիը հաճելի ջերմուԹիւն. դուք մեր ցանկալի և Թանկագին հիւրերն էք Ֆիմբուլի ԹագաւորուԹեան տիրապետուԹեան ժամանակ։

Թարգմ. Վարոս Առշակունի

Դորպաս



ԹԷՀՐԱՆ

—

Եղացիների մէջ վաղ սովորութիւն կայ ուսումնարան տալ 5—6 տարեկան թոյլ կազմուածքով երեխաներ, որոնց հետ ուսուցիչը դժուարանում է պարապել. ջոկում է նրանցից աւելի հասակաւորներին, առողջներին, և նրանց հետ է սկսում պարապել, իսկ մնացածները այնպէս նստում են դասարանում յաճախ իւրացնելով ուսուցչի դասը իրանց երեխայական անմեղ չարութիւններով. Այստեղից պարզ երևում է, որ պարսկահայերը դպրոցի վրայ նայում են որպէս երեխաներին երեսից զատող մի հիմնարկութեան վրայ. Դրա դէմ էլ ուսուցիչներն անզօր են կռւելու, որովհետև եթէ չեն ընդունում այդ փոքրահասակ երեխաներին՝ ծնողները, բարկանալով, անմիջապէս տանում են տալիս կաթոլիկների և բողոքականների դպրոցները, որոնք սիրով և գրկաբաց ընդունում են նրանց, քանի որ ունեն մանկական պարտէզ և, որ գլխաւորն է, նպատակ.., Ի դէպ պէտք է ասել, որ այսպիսի պայմաններում մանկական պարտէզը մի շատ անհրաժեշտ բան է ներկայումս, սակայն որից դժբախտաբար զուրկ է Հայկազեան վարժարանը. Այսպիսով ուսուցիչը անելանելի դրութեան մէջ է ընկնում. Երբ չեն ընդունում երեխաներին՝ ծնողներն ասում են. «Եթէ չես վերցնիլ, կըտանենք կըտանք կաթոլիկներն կամ բողոքականների

ուսումնարանը»։ Հենց այս պատճառով, ուսուցիչը, ճարահատեալ ընդունում է, որովհետև քանի մի այդպիսի դէպքեր տեղի են ունեցել։

«Հայկազեան վարժարանում» լեզուներից սովորում են՝ հայերէն, ֆրանսերէն և պարսկերէն։ Վերջին երկու լեզուները շատ անհրաժեշտ են Պարսկաստանում, մանաւանդ ֆրանսերէնը, որ տիրապետող է։ «Հայկազեան վարժարանի» ուսուցչական խումբը բաղկացած է 6 հայ և 1 պարսիկ ուսուցիչներից։

Բացի այդ, հայերը ունեն նաև մի բարեկարգ գրադարան-ընթերցարան, որ գտնւում է «Հայկազեան» վարժարանի բակում «Ընթերցասիրաց ընկերութեան» հսկողութեան տակ և որտեղ ստացւում են ամեն տեսակ հայկական լրագիրներ, նոյնպէս և ռուսերէն ու ֆրանսերէն։ Մուտքը ձրի է, սակայն օգտւողները շատ քիչ են։ Ընթերցարանը բաց է երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի և ուրբաթ օրերը, և համարեա ամեն անգամ դատարկութիւն է տիրում յաճախողների կողմից։ Երբ հարցրի դրա պատճառը, ընթերցարանապետը պատասխանեց. «Նախ՝ որ քիչ են հետաքրքրւողները եւ երկրորդ, որ մի քանիսները տուն են տանում կարդալու»։

Հայերը ունեն նաև մի գեղեցիկ թատրոնական դահլիճ «Հայկազեան» վարժարանի բակում, որ գտնւում է «Թատերասիրաց ընկերութեան» տրամադրութեան տակ։ Դրա համար դպրոցին իբրև վարձ տրւում է տարեկան 100 թուման։ Ներկայացումները տրւում են գլխաւորապէս ձմերայինն սեզոնում։

Թէհրանի հայերը խօսում են մաքուր հայերէն լեզւով և կրում են սակաւ բացառութեամբ պարսկական տարազի ոգեստ, այնպէս որ շատ անգամ նրանց դժւար է լինում զանազանել պարսիկներից։ Նրանք պարապում են գլխաւորապէս վաճառականութեամբ, գինեգործութեամբ, օղիվաճառութեամբ, ոսկերչութեամբ, ակնագործութեամբ, դերձակութեամբ, հիւսնութեամբ և այլ արհեստներով։ Կան և տէրութեան պաշտօնական հիմնարկութիւնների մէջ ծառայողներ։ Ի դէպ պէտք է ասել, որ ինչպէս հայերի, այնպէս և պարսիկների մէջ սաստիկ տարածւած է ոգելից խմիչքների գործածութիւնը։ Թէհրանում կան բաւական թւով հայ վաճառականներ, որոնք կենդրոնացած են գլխաւորապէս Սաւզա—մէյդանում և «Հայոց» ու «Ամիրի» քարվանսարաններում։

Հայոց հոգևոր գործերը վարում է էջմիածնից նշանակւած յա-

ջորդը, որի յաջորդարանը գտնւում է ս. Գէորգ եկեղեցու բակում։ Ներկայումս յաջորդի գահը թափուր է մնացել։

Թէհրանն ունի բազմաթիւ մզկիթներ, 5—6 ռազմամթերանոցներ, մի մեծ և ընդարձակ պարսպապատ զինավարժարան և մի մեծ թնդանօթարան (թօփխանա), որ գտնւում է քաղաքի կենդրոնում։ Այդ տեղ է գտնւում և շահի պալատը, որ զուրկ չէ գեղեցկութիւնից։

Թէհրանում կայ երեք բանկ, որոնցից երկուսը գտնւում են ռուսաց ձեռքում, իսկ մէկը՝ անգլիացոց։ Բացի այդ, կան առևտրական ընկերութիւնների գրասենեակներ, որոնց մէջ ամենից նշանաւորն է եղբ. Թումանեանցներինը, որ գտնւում է փոստատան մօտ՝ Ամիրի գեղեցիկ քարվանսարայում։

Թէհրանն ունի նաև երկաթուղու գիծ, որ դուրս գալով քաղաքի հարաւային դռնից՝ գնում է մինչև պարսիկների «Շահ Աբդուլ Ազիմ» նշանաւոր ուխտատեղին, որ գտնւում է քաղաքից 12 վերստ հեռաւորութեան վրայ։ Այստեղ ամփոփւած է հանգուցեալ Նասրէդդին շահի մարմինը։ Այդտեղ քրիստոնեաներին արգելւում է ներս մտնել։ Երկաթուղին անցնում է նշանաւոր Թէյ քաղաքի աւերակների մօտով։ Այդ աւերակների մօտ կայ մի վճիտ ադբիւր, որի դիմացի ուղղահայեաց քարեայ պատի վրայ շատ գեղեցիկև նուրբ կերպով քանդակւած է Ֆաթհալի շահի և իր պալատականների պատկերները։ Դրանից քիչ հեռու կայ մի բարձր աշտարակ, որի տակ, ըստ աւանդութեան, ամփոփւած է Տուղրիլ բէկի մարմինը։ Այդ աշտարակի մէջը դատարկ է։ Թէհրանի երկաթուղին գտնւում է Բէլգիական ընկերութեան ձեռքում։

Թէհրանն ունի նաև մի քանի ճեմելիքներ, որոնցից ամենանշանաւորն են սադրազամի և Սէյդ-Աբդուլլայի գեղեցիկ պարկերը։

Թէհրանում չըկան լաւ բաղնիսներ։ Եղածները վերին աստիճանի կեղտոտ են, մուխ և ցուրտ, ուր մարդ շատ շուտ կարող է հիւանդանալ։ Թէհրանում չըկան նաև աղքատանոցներ, աղքատները մեծ բազմութեամբ վիտում են ամեն քայլափոխում, մինչև անգամ գիշերն էլ դադար չեն տալիս։

Պարսիկները ընդհանրապէս ծոյլ ժողովուրդ են և անընդունակ ինքնուրոյն քաղաքակրթութեան։ Նախաձեռնութեան ոգին նրանց մէջ պակասում է։ Փոխադարձ օգնութեան ոգին՝ նոյնպէս։ Նրանք պարապում են, գլխաւորապէս, վաճառականութեամբ, մրգավաճառու-

թեամբ, կան և սեղանաւոր, զինագործ, հիւսն, որմնադիր, մշակ և այլն։ Պարսիկները, որպէս տաք երկրի բնակիչներ, ընդհանրապէս սև են, գունատ և նիհար. Նրանցից կան և բաւական թւով տէրութեան պաշտօնեաներ, որոնց մէջ տարածւած է վերին աստիճանի կեղծ քաղաքավարութիւնն ու կաշառակերութիւնը։

Թէև հայերը այստեղ աւելի ազատութիւն են վայելում, սակայն, պարսիկները հայերին կեղտոտ են համարում. չեն թողնում մրգերին կամ մի այլ բանի ձեռք տալ առնելու ժամանակ։ Իսկ իրանք անամօթ կերպով, չեն քաշւում օրը ցերեկով փողոցներում ամբոխի առաջ ամեն ինչ անելուց։ Պարսիկ լակոտները յաճախ սովոր են հայերի յետևից գոռալ. «Ուռմանի՛. սագ ուռմանի՛. ջառու բիշե ջիաննամի՛», այսինքն, «Հայ, շուն հայ, դժոխքի աւելող»։

Պարսիկները խարխափում են իսորին տգիտութեան մէջ։ Նրանց դպրոցները շատ անկանոն են և կոչւում են «Մայէ թաբխանաներ»։ Թէհրանը բաժանւում է թաղերի, որոնցից նշանաւորներն են՝ Դարւազա-Ղազին, Դարւազա-Դուլաբ. Հասանաբադ, Ղաղալաբադ, Սարգեսմա, Սանգելաջ և այլն։ Պարսիկները հաւասարապէս ցրւած են բոլոր թաղերում։ Գիշերը, ժամը 9-ից յետոյ, մէկ թաղից դէպի միւսը գնալու համար անպատճառ պէտք է իմանալ գիշերւայ անունը, հակառակ դէպքում պահականոցի զինւորները թոյլ չեն տալիս գնալ և մինչև անգամ մի գիշեր բանտարկում են։

Պարսկական փողի արժէքը ռուսական փողի վերաբերմամբ երբեմն ընկնում, երբեմն բարձրանում է։ Այժմ պարսկական մէկ թուման հաւասար է ռուսական մէկ րուբլի ութսուն կոպէկին (1 ր. 80 կ.)։ Պոստային նամականիշներն էլ ենթակայ են յաճախակի փոփոխութեան, փոխւում է վարչութիւնը, փոխւում է և նրանց ձևը։ Սրանից արդէն կարելի է գաղափար կազմել Պարսկաստանում տիրող կարգերի մասին։ Մի տեղ որ որոշ օրէնք, կարգ ու կանոն չըլինի, այնտեղ ով ինչ ուզենայ, կ'անի։

Պարսից զօրքը անկանոն տպաւորութիւն է թողնում մարդու վրայ։ Արքունի գանձարանի դրամական տագնապի պատճառով զինւորները սկսել են կողմնակի միջոցներով վաստակել իրանց հացը, օրինակ, մրգավաճառութեամբ, բանւորութեամբ և այլն։ Զինւորական դիսցիպլինը խիստ չէ նրանց մէջ. յաճախ փողոցում չեն բարեւում սպաներին։ Նրանք կրում են մի անգուր համազգեստ, կապտա-

գոյն կամ սև հասարակ կտաւէ կտորից մունդիր, կարմիր կամ կապոյտ պագոններով և պարսկական գլխարկ։ Կուրծքը և վարտիկի արտաքին զոլը զարդարւած են կարմիր երիզներով։ Վարտիկի երիզը մի փոքր լայն է և յիշեցնում է ռուսական գեներալին։ Պարսիկ սպաները կրում են ռուսական սպաների հասմազգեստ, ռուսական պագոններով, բայց պարսկական գլխարկներով։ Այնքան անհոգութիւն և առատաձեռնութիւն է տիրում պագոնների բաշխման մէջ, որ դուք իրաքանչիւր քայլափոխում կրհանդիպէք շատ ջահել գեներալների, գընդապետների և այլն, որպիսիները ռուսական զօրքի մէջ ընդհանրապէս լինում են հասակաւորներ։ Թէհրանում կայ մի գինւորական դպրոց. ներկայումս մի ռուս գնդապետի շնորհիւ զօրքի մէջ ուզում են մտցնել ռուսական դիսցիպլին։ Մէկ անգամ, մի զօրահանդէսի ժամանակ, պարսից ներկայ շահը շատ գոհ էր մնացել նրա վարժեցրած զօրքից և այդ մասին հեռագրով շնորհակալութիւն էր յայտնել Թուսաց Կայսեր։ Այդ գնդապետը կազմակերպել է կօզակների գունդ, ռուսական կօզակների համազգեստով և ունի իր առանձին նւագախումբը։ Խուրը նւագում է եւրոպական գործիքների վրայ պարսկական եղանակներ։

Թէհրանը չորս կողմից շրջապատւած է բարձր պարիսպներով, որոնց շուրջը տարածւում է մի բաւական խոր խրամատ, որ պատերազմի վտանգի ժամանակ կարելի է լցնել ջրով, թշնամուց պաշտպանելու համար. Քաղաքն ունի 12 դուռ, իրաքանչիւր կողմից երեք հատ, որոնք տանում են քաղաքից դուրս դէպի պանազան կողմեր. Փիշերայ ժամը 9-ից դրանք արդէն փակւում են, այնպէս որ դրանից ուշ եկող ճանապարհորդները քաղաք մտնել չեն կարող։ Քաղաքի շրջակայքում տարածւում են Թէհրանի ամարանոցները, որոնք շատ հեռու չեն քաղաքից։ Հայերը սովորաբար գնում են Վանակ հայաբնակ գիւղի ամարանոցը։ Քաղաքի շրջակայքում կան բազմաթիւ քարածուխի հանքեր։ Քաղաքից դուրս դնւում են նաև գազանանոցը և շաքարի ու թէյի գործարանները, իսկ քաղաքի ներսում ապակու գործարանը։ Ջաքարի և ապակու գործարանները նոյնպէս գտնւում են բելգիացոց ձեռքում.

Ն. Պապայեանց

ՄՈԼԼԱ-ՆԱՍՐԷԴԻՆԻ ՁԻՆ

(Ա ռ ա կ)

Հելօք մոլլան մի ձի ունէր,
Ուժից ընկած մի եաբու *).
Որ շատ տարիք Հեծնելուց յետ
Միտքը դրրեց ծախելու։
Շատ այիբներ **) թէև ունէր,
Շատ էլ մեծ էր էն խեղճ ձին,
Բայց և այնպէս շատ բարիքներ
Հասցրել էր մեր մոլլին.
Էլ Շամ, Հաբաշ, էլ Հնդաստան,
Ռուսէթ, Բաղդադ, Ֆրանգստան,
Էլ Ֆարս, Մսրա, Չինիմաչին
Ման էր ածել մեր մոլլին։

—

Սանձից բըռնած մէյդանի մէջ
Որ չըծաղկից մեր մոլլան,
Շատ գնողներ, դէսից-դէնից,
Ներրա ձիուն մօտեցան։
Բայց մեր մոլլան բան մտածեց —
Կանչեց իր մօտ նա մէկին,
Նրան յանձնեց ոլ ձին ծախէ
Ու վարձ առնէ լիովին։
Մարդն էլ խելօք համաձայնուեց,
Սկսեց գովել մոլլի ձին,
Որ լաւ գընով վաճառէ
Վրայ թափուղ ամբոխին։

---

*) Մատակ ձի.
**) Արատներ։

—«Դէ, մօտ արիք, ինչքան կրտաք,
Քեահլան ձի է, հախ Աստուած,
Լաւ փախ ունի, լաւ էլ կերթայ.
Իսպէս եարու չէք տեսած,
Ձահէլ ձի է, ինքն էլ խելօք,
Օրէնն հարիւր վերստ կանցնի.
Դրուստ կասեմ, հաւքը թևով
Սրա փախին չի հասնի:

—

Էդքան գովեստ որ չըլսեց
Մեր խեղճ մոլլան զարմացաւ,
Էլ չըհամբերեց շտապ-շտապ
Գնաց ձիուն մօտեցաւ,
Նորից յիշեց ձիու վարքը,
Վատուճիւններն իր տեսած,
Ապա հանդարտ, կամաց ձայնով
Ականջն ի վար փըսփըսաց—
—«Ձի ջան, կասես, էս մէյդանում
Քեզ խայտառակ ես չանեմ...
Քանի՛, քանի՛ պակասուճիւն
Քանի՛ այիբդ ես դիտեմ...

Պետ. Մոնուեանց



Բազուս.– Սեւ ֆազաֆ

ՋԻՄԱՇԱՂԻԿ

կախարդական խաչ

Սուաջ Մակիչի.

		1				
		2	3	4		
	5	6	7	8	9	
10	11	12	13	14	15	16
	17	18	19	20	21	
		22	23	24		
			25			

Թուանշանները փոխարինել տառերով, այնպես որ 2—4 կարդացվի անուն քաղաքի Կիլիկիայում. 5—9՝ լեառ, 10—16՝ իգական անուն. 17—21՝ որսի պարագայ, 22—24՝ քրիստոնէութեան նշան, 1. 3. 7. 13. 19. 23 և 25՝ Հայաստանի մի մասը։

—

Սուաջ Նոյնի.

— Ո —
— ՒՀ —
— ԱՒ —
— Ր —
— ՈՎԱ —

Փոխիկները տեղ վերցնել այնպիսի տառեր, որ դրւած տառերի հետ կազմեն առանձին առանձին բառեր, այնպես, որ Թէ առաջին և Թէ երկրորդ շարքի նոր տառերով վերևից ներքև կարելի լինի կարդալ երկու Հայ Հրատարակութիւնների անուններ։

Կետակցություն

3) Առաջ. Արեւ ատի.



Պէտք է այնպէս միացնել իրար հետ, որ ստացւի յայտնի բանաստեղծի ազգանուն։

I.

«Աղբիւրի» № 4 (ապրիլ) հանելուկների բացատրութիւնները։

№ 1) 1. Հասպա, 2. Ոստան, 3 Լոնդոն, 4. Լինոզա, 5. Անապա, 6. Նարվա, 7. Դանցիգ, 8. Իրան, 9. Անամ։

Վերոյիշեալ բառերի սկզբնատառերը կազմում են, Հոլանդիա.

№ 2) Սա—պատ.

Լուծեց Թագուհի Պապլեանց.

II

Պատասխան, (Տես Աղբիւր թ. 4. առաջարկութիւն Մակիչի, 3 րդ)

Մի վանկդ է «տա»—շատ սիրելի
Մի ցուցական դերանուն,
Միւսն է «պատ», առանց որի
Չէ հիմնւել ոչ մի տուն.
Այդ երկուսը միացնելով,
«Տապատս» բառն եմ գտնում ես,
Որ տգեղացուցիչ իրա ձևով
Ատելի է քեզ և մեզ.—

Լուծեց՝ Ե Մ. Մ.

Ա Ղ Բ Ի Ւ Ր

Ր. Ր Ա Փ Ի Ն

ՓԼԵԳՄԱՏԻԿ ՏԵՄՊԵՐԱՄԵՆՏ

—

Փլեգմատիկ տղայի նկարագիրը եւ այդ տեմպերամենտի բացատրութիւնը

երոյիշեալներից անշուշտ ընթերցողը կարող է գուշակել՝ թէ ուրեմն փլեգմատիկ հոգու և սրտի յատկութիւնները ինչ կարող են լինել. և իրաւ, նրա մտաւոր գործողութիւնները շատ սահմանափակ են։ Թէև նրա աչքերը բաց են, բայց նրանք քիչ բան են տեսնում, նա ոչ լսում և ոչ էլ հնազանդւում է։ Ոչ մի բան նրան չի հետաքրքրում. ամեն ինչ նրա համար մի՛ևնոյնն է։ Նորութիւնները նրա վրայ ոչ մի դրդիռ, ոչ մի ազդեցութիւն չեն թողնում, այնպէս որ, այս կողմից փլեգմատիկի զգացմունքները տխուր և ուրախ բաների համար շատ թեթև կերպով են զգացւում։ Որտեղ ուրիշ տղաները տօնել, հանդէսներ են կատարում, այդպիսի դէպքերում փլեգմատիկը շատ-շատ միայն ժպտում, ծիծաղում է։ Որտիղ ուրիշները ցաւից ու տխրութիւնից իրանց շորերը պատառոտում, լալիս են, փլեգմատիկը իր սովորական դիրքն ու երեսը պահում, թագցնում է։ Որովհետև ուրախութիւն, տրտմութիւն փլեգմատիկի զգացմունքները զօրեղ կերպով չեն շարժում, այդ պատճառով էլ նրա դատողութիւնը լինում է սառը, չոր ու ցամաք։ Փոքրիկ փլեգման չոր ու ցամաք, սառ, բանաստեղծական զգացումից զուրկ անհատն է ներկայացնում։ Փլեգման թատրոնում, օպերայում և նոյն սառնութիւնն ու անտարբերութիւնն է ցոյց տալիս։ Նոյն իսկ այնպիսի տեղերում, որտեղ հանդիսականների մեծ մասը յուզւած

արտասւալից աչքերով հառաչանքներ են արձակում, այնտեղ մեր ֆլեգմատիկը հանգիստ, անտարբեր իրա համար նայում է: Ելէ մէկը մօտենայ և հարցնէ այդ սառնասրտութեան պատճառը. նա նոյն եղանակով կըպատասխանէ. «Ինչ իմ իմ, թէ այդպէս եղաւ, եւ երկրորդ ո՞վ գիտէ, թէ նա ուղիղ է եղել»: Սրա համար էլ այս տեմպերամենտը գիտնական մարդկանց ուսումնասիրելու շատ առիթներ և նիւթեր է տալիս: Ֆլեգմա տղայի այսպիսի հանգիստ, սառն ըմբռնողութիւնները անշուշտ նրան պաշտպանում են լարւած և յաւիշտակող դատողութիւններից: Այս բանը թէև մի կողմից նրա համար ձեռնտու է, բայց միւս կողմից դրանով նրա կամքի ոյժը կարևոր հաստատութիւնը և լարելու ոյժը՝ պակաս է լինում: Դա հասկանալի է. քանի որ երբ մի տղայ ոչ մի բանով չի ոգևորւում, նա չի կարող նոյնպէս հասկանալ ներքին կրակ, ոյժ աւազ քանները և վերջապէս անձնազոհութիւն: Ահա եռանդի, սիրոյ, այս պակասութիւնը դէպի իւրաքանչիւր անհատ կամ ամեն մի իր, բնականաբար առաջ կըբերէ մի որոշ աստիճանի պանդաղութիւն և անտարբերութիւն: Այս յատկութիւնները անշուշտ ինչպէս մարմնական, նոյնպէս հոգեկան գործողութիւնների վախ, երկիւղ, անվստահութիւն են առաջացնում, որի համար էլ այդ բանները նրա իդէալ կազմող գաղափարների մէջ չըկան: Սրանցից առաջանում են նրա մէջ համակրութեան զգացմունքի պակասութիւն և իսկապէս ֆլեգմատիկը ոչ մի մարդու բարօրութեան մասին չի մըտածում. նրա համար այդ ամենը միևնոյնն են. նա ոչ բարեկամութիւն և ոչ էլ ընկերութիւն է ուզում անել: Մինչև անգամ նա այդ կապը չի հաստատում և այն մարդկանց հետ՝ որոնք նրան շատ անգամ գործով բարեկամութիւն, ընկերութիւն են ցոյց տւել:

Ուրիշների կարիքի և դժբախտութեան ժամանակ նա անտարբեր և անզգայ է մնում: Երբ մենք այս ամենը նրա բնական, ժառանգական յատկութիւններով բացատրենք, այն

ժամանակ ի հարկէ պարտաւոր ենք նրան ներել։ Մի անգլիացի բոլորովին հանգիստ և անդրդայ կերպով նայում էր, թէ ինչպէս մէկը իր մօտ ծովի ալիքների մէջ, կռիւ տալով, խեղդւում էր. թէև նա կարող էր թեթև օգնութեամբ նրա կեանքն ազատել, բայց բոլորովին տեղից չշարժուեց։ Երբ մէկը նրա այս անտարբերութիւնը երեսին տւաւ, անգլիացին կարճ և չոր կերպով պատասխանեց. Նա ինձ չդիմեց։

Եթէ մենք ֆլեգմատիկի բոլոր յատկութիւնները ի մի հաւաքենք, կարող ենք հետևեալն ասել։ Նա հակում ունի իր համար յարմարութիւն ստեղծելու, մարմնական և հոգեկան թմրութիւն, դանդաղկոտութիւն, ընկերութեան և ուրիշներին օգնելու պակասութիւն։ Միւս կողմից լաւ ապրելու ձգտումն, հանգստութիւն, համբերութիւն, խաղաղութիւն, բոլոր վարմունքի և գործունէութեան մէջ չափաւորութիւն և հանգստութիւն։ Ահա սրանք են ֆլեգմատիկ տղայի առաւել և պակաս կողմերը։

Ի՞նչպէս պէտք է ֆլեգմատիկ տղայի հետ վարուել

Այս տեմպերամենտով տղայի հետ գործ ունեցողները մեծամեծ պահանջներ չըպէտք է անեն, ապա թէ ոչ նա դրանից սարսափելով՝ ունեցած կամքի ոյժն էլ կըթուլացնէ։ Այս պատճառով որևէ գործ, դաս, պարապմունք նրան տալիս՝ պէտք է թեթև, քիչ չափով տալ, որովհետև այդ տեսակ միջոցներով հնարաւոր կըլինի նրան հետզհետէ առաջ տանել, որով նա իր սկսած գործը սիրով կըկատարէ։ Այս տեսակէտն ի նկատի ունենալով սխալ կըլինի այն ուսուցիչների և ծնողների վարմունքը, որոնք այդ տեմպերամենտի տղաներին զանազան խնդիրներ, շարադրութեան նիւթեր և կամ աշխատանք են տալիս, որ նա այդ բոլորը մի ամսւայ կամ տարւայ ընթացքում կատարէ։ Այն ինչ նրա ընաւորութեան յարմար և ճիշտ կըլինէր՝ եթէ

դրանք մաս-մաս առաջարկին և իւրաքանչիւր մասը կատարելուց յետոյ, որոշ ժամանակ հանգիստ տրւի, ապա նոր, արաճի շարունակութիւնն առաջարկել և այսպէս շարունակ: Ահա այս կերպ հնարաւոր կլինի դանդաղ տեմպերամենտ ունեցող տղաներին առաջ տանել և նրա դործունէութեան կամքն ու ցանկութիւնը զարգացնել. այսպէս վարւելն մանկավարժութեան մէջ ասւում է ամենից իր կարողութեան համաձայն: Այդպէս է լինելու, քանի որ նրա հոգեկան, ժառանգական յատկութիւնները նոյնն են պահանջում: Ֆլեգմատիկ տղաների հետ գործ ունեցողները, մանաւանդ ծնողներն ու ուսուցիչները, պարտաւոր են ամեն դէպքում չափաւոր, համբերող լինել. նրանք շարունակ հետևելով պէտք է աշխատեն իրանց խնամքին յանձնած ֆլեգմատիկ տղայի իւրաքանչիւր օրւայ, շաբաթւայ յառաջադիմութեամբ ուրախանալ: Այսպիսի դէպքերում ի հարկէ առաջնորդները նրանց միւս պակասութիւններին շատ խիստ չպէտք է վերաբերւեն, ի նկատի ունենալով, որ ժամանակի ընթացքում դրանք կանհետանան և իրանց ուրախութիւն, մխիթարութիւն պիտի պատճառեն: Դպրոցի ուսուցիչն էլ դոհ պիտի լինի, որ այդ տեմպերամենտով աշակերտը ամսէ ամիս փոքրիկ յառաջադիմութիւն է անում: Այստեղ չպէտք է տգէտ ծնողների, դահիճ—վարձկան ուսուցիչներին նայել, որոնք ծուլութիւնից ոչնչով չըհետաքրքրւելով՝ աշակերտի հոգեկան յատկութիւնները չըհասկանալով, իրանց բորբոքութիւնը թագցնելու համար աշակերտների գլխին յանդիմանութիւն են կարդում, մանկավարժական և բնական օրէնքներին հակառակ նրանց ի զուր տեղը թւանշաններով, պատիժներով սարսափեցնում և խեղճ անմեղ տղաներին իրանց տգիտութեանը զոհ բերում: Մենք շատ տղաներ ենք ճանաչում, որոնք դպրոցը թողել են միմիայն այս կամ այն ուսուցչի տմարդի վրէժխնդրութիւնից և մինչև այնուհետև իրաւունք ունինք դանգատելու, որ նրանք դպրոցի վրայ խէթ աչքով են նայում և իր դաստիարակին էլ

սրհամարանքի արժանացնում: Չէ կարելի ասել, թէ ֆլեգմատիկները տաղանդից զուրկ են, նրանք իրանց սովորածները շատ լաւ գիտեն և նրանից երկար ժամանակ հարկաւոր դէպքում կօգտւեն ու կըսեպհականացնեն:

Այս տեմպերամենտի տղաների գլխաւոր պակասութիւնն է շատ քիչ կզացմունք ունենալը դէպի ուրիշները. այնպէս որ շատ անգամ ուսուցիչները նրանց առաջ անզօր, անոյժ են լինում և ձեռքերը ծալած շւարած մնում են: Յայտնի է, որ տղաները ծնողների, ուսուցիչների գովասանքով, խոստումներով և յանդիմանութեամբ կըքաջալերւեն. յառաջ կըգնայ. բայց այս ամենը ֆլեգմայի համար չէ ասած, այս բոլոր միջոցներն էլ անզօր են ֆլեգմայի անտարբերութեան և անզգայութեան առաջ: Պատւի զգացում, յանդիմանութիւն նա չի զգալ, երկուսն էլ նրան շարժել չեն կարող, մնում է խիստ հետևողութիւն, առանձին ուշադրութիւն և դանդաղ առաջ գնալ: Պարզ է, որ այս պայմանների մէջ ուսուցիչը համբերող պիտի լինի և նրանից այդ կըսովորի: Այս բաներին, մանաւանդ դաստիարակչական գործին շատ մեծ օգուտ կըտայ ինքը ընտանիքը: Նա պիտի լինի դաստիարակութեան առաջին և գլխաւոր աղբիւրը. դպրոցը միմիայն օգնող միջոց է լինելու: Ուսուցչի հետ ծնողները ևս խիստ ուշք են դարձնելու իրանց փոքրիկ անտարբեր ֆլեգմատիկի վրայ: Նրանք պէտք է երեխայի ամեն մի պակասութիւնը գիտեն, ուսուցչի հետ խորհրդակցեն և նրա համաձայն վարւեն. մանաւանդ առանձնապէս ուշք է դարձնելու, որ տղան անօգուտ, աննպատակ ի զուր տեղը չըթափառէ: Այս բանից շատ չարիքներ կարող են առաջանալ, նրանք ամեն կերպ հետևել են, որ տղան իր ժամանակը օգտակար անցկացնէ:

Այսօր շատ բաների վրայ մանկավարժներ և փորձած բժիշկներ հիմնւելով, զանազան երկրների ստատիստիկական տեղեկութիւնների համաձայն բողոքում են, որ աշակերտները շնորհիւ իրանց դասերի շատութեան, ծանրութեան, դասերի երկարա-

տևուԹեան նրանք մտաւոր և ֆիզիքական կերպով ծանրաբեռնուած են, որի հետևանքը լինում է Թոյլ, անզօր և անխանդ սերունդ պատրաստելը. սերունդ՝ որը եԹէ այդ կերպ մի քանի յաջորդներ տար, սիրահատուԹիւն և գիտուԹեան յետադիմուԹիւն կառաջանար: Մտաւոր ծանրաբեռնուԹիւնը, մանաւանդ աւելի վնասակար է ֆլեգմա տղաների համար: Սրանց որևէ բանի համար տալ ժամանակ, նշանակել որոշ պարտաւորական բան վաղօրօք կարելի չէ, այլ իրանց կարողուԹեան չափով պէտք է առաջնորդել, այնպէս որ պարտաւորեցուցիչ առած խօսքը հետզհետէ սովորեն: Բացի սրանցից ծնողներն ու դպրոցական վարչուԹիւնները անպատճառ լուրջ կերպով պէտք է ուշք դարձնեն տղաների մտաւոր և ֆիզիքական ծանրաբեռնուԹեան վրայ: Սա այնքան մեծ խնդիր է, որչափ մանկավարժական և հոգեբանական օրէնքների վրայ հիմնուած դաստիարակուԹեան զանազան եղանակները:

Ձրպէտք է մոռանալ նոյնպէս, որ ֆլեգմա տղաների ծնողներն ու ուսուցիչները իրանց տղաներից ոչ սէր և ոչ էլ շնորհակալուԹիւն պիտի սպասեն կամ պահանջեն: Նրանք բաւականանալու են նրանով, որ իրանց սաները, դոնէ գիտուԹիւններ սովորելով, առաջ են գնում և ժամանակին իրանց ընտանիքին և հասարակուԹեան օգտակար անդամներ կըլինեն ու իրանց պարտքը ճշտուԹեամբ կըկատարեն:

Գ. Զիլինգարեան

Խմբագիր-հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

Типографія К. И. Мартиросіанца, Орб. ул. д. № 1—2

СѢВЕРНЫЙ КУРЬЕРЪ

Ежедневная, политическая и литературная газета

Редакторъ-издатель

князь В. В. Варятинскій

Отдѣленіе въ Тифлисѣ при конторѣ редакціи журналовъ

АГБЮРЪи ТАРАЗЪ

(*Театральная*, 8)

Пріемъ подписки, объявленія и розничная продажа.

ПОДПИСНАЯ ЦѢНА ГАЗЕТЫ

СѢВЕРНЫЙ КУРЬЕРЪ

На годъ съ дост. и пересыл. . . 10 р. „
„ 6 мѣс. „ „ . . . 5 р. „
„ 3 „ „ „ . . . 2 р. 50 к.
„ 1 „ „ „ . . . 1 р. „

Съ перваго мая по 31-е декабря 7 р. „

Отдѣльные нумера по 5 коп. **книжно-газетнымъ кіоскамъ** значительная УСТУПКА.

ОБЪЯВЛЕНІЯ принимаются по цѣнѣ: 40 к. строка петита впереди текста и 15 к.—позади.





Ի երիտասարդ, որ հմուտ է հայերէնի և գիտէ գերմաներէն, ֆրանսերէն և յունարէն լեզուները և լաւ ծանօթ է միանգամայն դաստիարակութեան մեթոդին, պատրաստում է այդ առարկաներից վերաբերութիւն ունեցողներին և ցանկանում է դասեր ունենալ հայ ընտանիքներում.

Պայմաններին մանրամասն տեղեկանալու համար դիմել՝

Малая Орбелян., д. 3 квартира Мдиваняна, І. Максудіанцу.

ԱԽՏԱՐԱԿԱՆ ԳԼԻՒԽ

Պատշաճ բացատրութիւններով պատկերներ երկրաշարժից վնասած գիւղերի.

Գինն է 25 կոպ.

Դիմել՝ Тифлисъ, ред. „Таразъ“:

Լոյս է տեսել
պատկերազարդ

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԻՍ

VI ԳԻՐՔԸ

Բացառած է բաժանորդագրութիւն VII և VIII գրքերի:

Երկու գրքի գինն է 3 ր., մէկինը՝ 2 ր.

Դիմել՝ Ерванду Лалаянцъ, Тифлисъ, Семинарія Нерсисянъ.

Отъ конторы газеты

„НОВОЕ ОБОЗРѢНІЕ“.

Изданіе газеты „НОВОЕ ОБОЗРѢНІЕ будетъ возобновлено

СЪ 18-го АВГУСТА

НАСТОЯЩАГО ГОДА.

Подписчики прошлаго года, непожелавшіе взять обратно оставшіяся за конторой деньги, будутъ получать газету БЕЗЪ ДОПЛАТЫ съ 18-го августа по 1-е октября. Тѣ изъ нихъ, которые пожелаютъ получать газету и затѣмъ, съ 1-го октября по 1-е января 1901 г., доплачиваютъ 2 руб. 50 коп. Новые же подписчики за время съ 18-го августа по 1-е января 1901 года платятъ 3 руб. 50 коп.

Подписчики прошлаго года, въ случаѣ перемѣны адреса за время до 18-го августа, сообщаютъ о томъ заблаговременно въ контору „Нов. Об.“, причемъ особой доплаты за перемѣну адреса не вносятъ.

Для пріема подписки и объявленій

контора (Барятинская, д. кн. Тумановыхъ) открыта по вторникамъ и пятницамъ, отъ 6 до 7 час. вечера.